



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«30» 01 2019թ.

N..... ՁԺ-Ե

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ համայնքներում վարչական հսկողության իրականացման գործընթացում այսուհետ առաջնորդվել հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցով:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՍԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուղեցույցով սահմանվում է վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման մեթոդիկան:

2. Վարչական հսկողությունը տարածվում է համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Վարչական հսկողությունն իր մեջ ներառում է իրավական և մասնագիտական հսկողությունները:

1) իրավական հսկողությունը՝ համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման օրինականության ստուգումն է:

2) մասնագիտական հսկողությունը՝ համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականության, արդյունավետության ու միասնականության ստուգումն է:

3. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

4. Վարչական հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից.

1) Պետության կողմից պատվիրակված յուրաքանչյուր լիազորության իրականացման նկատմամբ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինը այն պետական մարմինն է, որի իրավասության մեջ է մտնում այդ լիազորությունը: Մասնագիտական

հսկողության բարձրագույն մարմինները համայնքում պատվիրակված լիազորությունների նկատմամբ մասնագիտական և իրավական հսկողություն կարող են իրականացնել բացառիկ դեպքերում՝ բարձրագույն իրավական հսկողություն իրականացնող մարմնի գրավոր համաձայնությամբ, նրա կամ մարզպետի պահանջով:

2) Մարզպետի, իրավական հսկողության բարձրագույն մարմնի, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77²-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքում մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից կիրառվող բոլոր միջամտող միջոցառումները պետք է լինեն գրավոր և հիմնավորված:

3) Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն է:

Մարզպետի, իրավական հսկողության բարձրագույն մարմնի և մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները սահմանվում են բացառապես օրենքով:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Վարչական հսկողությունն իրականացվում է իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված վարչական հսկողության աշխատանքային ծրագրի /այսուհետ՝ աշխատանքային ծրագիր/ համաձայն:

Մարզպետարանը իր հաջորդ տարվա աշխատանքային ծրագիրը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն է ներկայացնում մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

Աշխատանքային ծրագիրը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվում եռամսյակային բաշխմամբ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար նախատեսելով հնարավորինս հավասար թվով համայնքներ:

Աշխատանքային ծրագրում չեն ընդգրկվում այն համայնքները որոնցում աշխատանքային ծրագրում ընդգրկվելու տարուն նախորդող տարում իրականացվել է վարչական հսկողություն: Եթե օբյեկտիվ գործոններով պայմանավորված առկա է

անհրաժեշտություն աշխատանքային ծրագրում ընդգկելու համայնքներ որոնցում աշխատանքային ծրագրում ընդգրկվելու տարուն նախորդող տարում իրականացվել է վարչական հսկողություն, ապա մարզպետը աշխատանքային ծրագրի հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն է ներկայացնում հիմնավորում՝ բնութագրելով աշխատանքային ծրագրում համայնքների ներառման անհրաժեշտությունը:

Աշխատանքային ծրագրում ընդգրկվում են մարզի համայնքների առնվազն 33 %-ը:

Աշխատանքային ծրագրում ներառվում է համայնքի անվանումը, հսկողության իրականացման բնագավառը և եռամսյակային կտրվածքով հսկողության իրականացման ժամանակահատվածը:

Մարզպետը վարչական հսկողությունն իրականացնում է իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Առանձին դեպքերում մարզպետը իրավական հսկողության բարձրագույն մարմնի գրավոր համաձայնությամբ կարող է իրականացնել ամենամյա աշխատանքային ծրագրում չընդգրկված միջոցառումներ:

Իրավական հսկողության բարձրագույն մարմինը համայնքում կարող է իրականացնել իրավական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Իրավական հսկողության բարձրագույն մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունն է /այսուհետ՝ իրավական հսկողության բարձրագույն մարմին/:

ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հսկողությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգով:

Վարչական հսկողությունը իրականացվում է մարզպետի հրամանով հաստատված աշխատանքային խմբի կողմից: Մասնագիտական հսկողություն իրականացնելու դեպքում աշխատանքային խումբ կարող է չձևավորվել:

Մինչև 10 մլն դրամ բյուջե ունեցող համայնքներում վարչական հսկողության իրականացման առավելագույն ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 5 անընդմեջ աշխատանքային օր,

10 մլն դրամից մինչև 40 մլն դրամ բյուջե ունեցող համայնքներում վարչական հսկողության իրականացման առավելագույն ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 10 անընդմեջ աշխատանքային օր,

40 մլն դրամ և ավելի բյուջե ունեցող համայնքներում վարչական հսկողության իրականացման առավելագույն ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր,

Հսկության առաջին օր է համարվում հսկությունը փաստացի սկսելու օրը: Հսկությունը փաստացի սկսելու օր է համարվում հսկվող համայնքի ղեկավարի աշխատակազմում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը: Ստուգման մատյանը պարունակում է տեղեկություններ՝ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման հարցերի, նպատակի, ժամկետների մասին:

Հսկողության ժամկետը չպետք է գերազանցի հսկողություն իրականացնելու մասին մարզպետի (փոխարինող պաշտոնատար անձի) կարգադրության մեջ նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ մարզպետի (փոխարինող պաշտոնատար անձի) կարգադրությամբ, սույն կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմնի գրավոր համաձայնության դեպքում, ինչի մասին պետք է տեղեկացվի ստուգվող համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Հսկողության ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ հսկողությանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ հսկողության իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա մարզպետի (փոխարինող պաշտոնատար անձի) կարգադրությամբ ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի

վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով: Հսկողության փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը:

Հսկողության ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Մարզպետի կարգադրությամբ ձևավորված աշխատանքային խումբը միևնույն համայնքում ստուգում կարող է իրականացվել օրացուցային տարում ոչ ավելի, քան մեկ անգամ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երրորդ կետով սահմանված, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային հաշվանցումներ և (կամ) վերադարձ ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ համայնքում կատարվող ստուգման դեպքերի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների:

Մարզպետի կարգադրությամբ ձևավորված աշխատանքային խումբը իրավունք ունի մեկ տարվա ընթացքում միևնույն համայնքում իրականացնել կրկնակի ստուգում, եթե առկա են վերստուգումներ անցկացնելու հետևյալ հիմքերից առնվազն մեկը,

ա) համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կամ համայնքի բնակչության առնվազն 1/3-ի պահանջով.

բ) իրավական հսկողության բարձրագույն մարմնի գրավոր հանձնարարությամբ.

գ) եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված են նախորդ ստուգողի այն հանցավոր գործողությունները, որոնք նա թույլ է տվել ստուգումը կատարելիս.

դ) Հսկողության արդյունքների վերադասության կարգով բողոքարկման դեպքում.

ե) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելու դեպքում.

զ) քաղաքացիների, իրավաբանական անձանց գրավոր դիմումների հիման վրա:

Բացառությամբ բ) կետի մեկ տարվա ընթացքում միևնույն համայնքում կրկնակի ստուգում իրականացվում է իրավական հսկողության բարձրագույն մարմնի համաձայնության պարագայում:

Կրկնակի ստուգման անցկացման հիմքեր ներկայացրած անձինք, կրկնակի ստուգման արդյունքում այդ հիմքերի չհաստատվելու (չհիմնավորվելու) դեպքում, ենթակա են պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստուգումների անցկացումը համայնքներում արգելվում է ընտրություններից մեկ ամիս առաջ և մինչև դրանց պաշտոնական ավարտը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ավագանու ներքոնշյալ լիազորությունների նկատմամբ մարզպետն իրականացնում է իրավական հսկողություն՝

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգի ընդունում.

2) համայնքի զարգացման ծրագրի հաստատում.

3) համայնքի բյուջեի, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում.

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկում և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործում.

5) կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

6) համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանած պայմաններով համայնքի սեփականություն համարվող գույքի օտարում կամ օգտագործման տրամադրում.

7) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացում.

8) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկում.

9) համայնքի ղեկավարի վարձատրության չափի որոշում.

10) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային եւ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին օրենքով սահմանված կարգով որոշման կայացում .

11) համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին իր որոշմամբ համաձայնություն տալը.

12) առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների օրենքով սահմանված կարգով հաստատում.

13) տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների տեսակների ու դրույքաչափերի օրենքով սահմանված դեպքերում սահմանում.

14) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանում.

15) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների եւ օտարման գների չափերի եւ պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

16) համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման եւ վերանվանման վերաբերյալ որոշման կայացում.

17) համայնքի ղեկավարի աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի հաստատում.

Համայնքային ծառայության պաշտոնների մասով համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի եւ (կամ) հաստիքացուցակի հաստատում, ինչպես նաեւ փոփոխելու եւ (կամ) լրացնելու հարցում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին որոշման կայացում:

18) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության հաստատում.

19) համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատում.

2. Համայնքի ղեկավարի՝ ներքոհիշյալ բնագավառներում իրականացրած լիազորությունների նկատմամբ մարզպետն իրականացնում է իրավական և (կամ) մասնագիտական հսկողություն՝

1. Տնտեսության բնագավառ

1) համայնքի բյուջեի նախագծում, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում և համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում, բյուջեի կատարման ապահովում, և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների եւ տարեկան հաշվետվության ներկայացնում համայնքի ավագանուն.

2) տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմանը.

3) տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային եւ պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպում.

4) տեղական հարկերը, տուրքերը եւ վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառում.

5) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում ավագանու հաստատմանը.

6) համայնքի բյուջեի միջոցների տնօրինում, դրանց նպատակային օգտագործման ապահովում.

2. քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1) կառավարության սահմանած կարգով քաղաքային եւ գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի, հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմում:

2) համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարում, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմում եւ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

3) սահմանված ռեպբերում եւ կարգով համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկում, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրում, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցում.

4) շինարարության (քանդման) թույլտվության սահմանված կարգով տրամադրում, շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատման ավարտելու համար օրենքով սահմանված կարգով միջոցառումների ձեռնարկում.

5) ավարտված շինարարության շահագործման փաստագրման սահմանված կարգով ձեւակերպում.

6) ինքնական շինարարության կանխարգելում ու կասեցում եւ օրենքով սահմանված կարգով դրանց հետեւանքների վերացման ապահովում.

7) շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման եւ պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողության իրականացում.

8) համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման իրականացում եւ բաշխում, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

9) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տրամադրում.

10) համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրնուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի եւ այլ կառուցվածքների շահագործման կազմակերպում եւ կառավարում.

11) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում:

3. Հողօգտագործման բնագավառ

1) քաղաքային եւ գյուղական համայնքների հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաների կառավարության սահմանած կարգով կազմում.

2) համայնքի հողերի գոտիավորման եւ օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ եւ սահմանած պայմաններով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սահմանված կարգով օտարում կամ օգտագործման տրամադրում, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման տրամադրում.

3) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացում.

4) ապօրինի հողօգտագործումների՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով կանխարգելում, կասեցում եւ վերացում:

5) համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման սահմանված կարգով իրականացում եւ համայնքի հողային հաշվեկշռի կազմում.

6) համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի եւ համայնքի սահմանանիշերի պահպանության՝ սահմանված կարգով ապահովում:

4. Տրանսպորտի բնագավառ.

1) համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման եւ շահագործման կազմակերպում.

2) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեության կազմակերպում եւ կառավարում.

3) իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթեւեկության նշանների տեղակայման ու հանման հաստատում եւ թույլատրում:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով եւ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթուղիների կազմակերպման սխեմայի կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) եւ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթուղիների կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթուղիների կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումների կայացում՝ երթուղիների անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:

5. Առևտրի և ծառայությունների բնագավառ.

1) օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում առևտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացում:

2) ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

3) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության տրամադրում:

4) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

5) համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվության տրամադրում:

6) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության տրամադրում:

7. Այլ բնագավառներ

1) ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստերի հրավիրում եւ վարում.

2) համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին ուղարկում եւ համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցնում.

3) համայնքի զարգացման քառամյա ծրագրի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

4) աշխատակազմի (այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաեւ բյուջետային հիմնարկների եւ ոչ առետրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատում.

5) աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների՝ ավագանու հաստատմանը՝ ներկայացում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված դեպքում:

6) աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների ավագանու հաստատմանը ներկայացում.

7) համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների եւ ոչ առետրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

8) համայնքային ենթակայության առետրային կազմակերպությունների խորհուրդների եւ վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

9) համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին օրենդրությամբ սահմանված կարգով նշանակում եւ ազատում.

10) համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարների՝ համայնքի ավագանու որոշմամբ նշանակում եւ ազատում:

11) տեղական հանրաքվի նշանակելու մասին որոշման նախագծի համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

12) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրերի կնքում, համայնքի ավագանու վավերացմանը դրանց ներկայացում: Միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու եւ դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

13) համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին առաջարկության ներկայացում.

14) Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու հաստատմանը առաջարկի ներկայացում.

15) համայնքի անվանման եւ վերանվանման ենթակա փոփոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային եւ այլ հիմնարկները եւ կազմակերպությունները համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում եւ օրենքով սահմանված կարգով գրանցման ներկայացում (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

16) շենքերի եւ շինությունների համարակալման սահմանում.

17) իր իրավասության շրջանակում որոշումների ընդունում, արձանագրությունների կազմում եւ կարգադրությունների արձակում.

18) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն եւ սեփական պատասխանատվությամբ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կազմակերպում եւ ղեկավարում.

20) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական եւ այլ կադաստրների վարում.

21) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային եւ կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական եւ տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետեանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար միջոցների ձեռնարկում.

22) համայնքի բնակիչների հաշվառման կազմակերպում.

23) համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացում.

24) 3000-ից ավել բնակիչ ունեցող համայնքներում քաղաքացիների ընդունելության կատարում, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ բողոքների քննության առում եւ միջոցների ձեռնարկում.

25) խնամակալության, հոգաբարձության սահմանում, խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորությունների իրականացում.

26) իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.

27) օրենքով սահմանված կարգով համայնքի գինապարտների գրանցամատյանի վարում, նրանց վերաբերյալ ցուցակների, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու եւ աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալների ներկայացում տարածքային գինվորական կոմիսարիատ.

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

Մարզպետարանի կողմից հսկողություն է իրականացվում համայնքում կադրային գործի վարման հետևյալ գործընթացների նկատմամբ.

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության հաստատում օրենքով սահմանված կարգով

2. Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանների վարում, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

3. Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկման շրջանակներում ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերի համադրում իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4. Օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքի հաստատում (կառուցվածքը անհրաժեշտ է հաստատել, եթե աշխատակազմն ունի ստորաբաժանում (բաժին)):

5. Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակի համապատասխանությունը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափերի համապատասխանությունը «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

6. Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատման (փոփոխման) ընթացքը, այդ թվում՝ անվանացանկից հանված պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած ճանաչելն ու անվանացանկում ավելացված նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը, ինչպես նաև վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակության համադրումը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջների հետ:

7. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքային ծառայողների անձնական գործերի վարում:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմի հաստատում, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմի հաստատում ու 20-օրյա ժամկետում՝ հանձնաժողովի աշխատակարգային նիստի հրավիրում և հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրություն (հանձնաժողովի աշխատակարգային նիստի արձանագրություն):

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի հաստատում:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի հաստատում և դրա պատշաճ իրազեկում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին.

11. Օրենքով սահմանված կարգով մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանի, վերապատրաստման հաշվառման մատյանի, ինչպես նաև անձնական գործերի հաշվառման մատյանի վարում.

12. Համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների (մրցույթի արդյունքներով նշանակված կամ ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող) կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալների համադրումը համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների հետ.

13. Համայնքներից Հայաստանի Հանրապետության մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալների (Ձև NN 1, 2) արժանահավատության փաստացի ուսումնասիրություն.

14. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրություն.

15. Ձինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարում.

16. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից հայտնաբերած թերությունների մասին զեկուցագրերի համադրում թերությունները վերացած լինելու մասին համայնքների ղեկավարների ներկայացրած տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ:

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հսկողության արդյունքներն ամփոփվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Հսկողության արդյունքներով կազմվում է ակտ՝ երկու օրինակից, խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք, որում արձանագրվում են տեղեկանքը կազմելու ամսաթիվն ու տեղը, հսկողությունն իրականացնող մարզպետարանի և համայնքի անվանումները, հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետը, արդյունքները, ակտի դեպքում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչների բացատրությունները (հատուկ կարծիքը), օրինակների քանակը և հերթական համարը:

Հսկողության ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, խախտման կոնկրետ ժամանակը, հղում՝ համապատասխան փաստաթղթերին, պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը:

Եթե հսկողության ընթացքում արձանագրված խախտումները և դրանց հիման վրա համայնքի ղեկավարին առաջադրված պատասխանատվությունը հիմնվում է համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների կողմից կամ նրանց միջև կիրառված գների վերաբերյալ հսկողությունն իրականացնող մարմնի կողմից կատարված համեմատական ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա, ապա հսկողության ակտին կցվում է նաև նշված ուսումնասիրության և վերլուծության վերաբերյալ տեղեկանքը:

Կազմված ակտն հսկողություն իրականացնող անձինք երեք օրվա ընթացքում պետք է ներկայացնեն համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմված ակտն ստորագրում են հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձը (անձինք) և համայնքի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարածայնությունների դեպքում կողմերի կարծիքներն արձանագրվում են ակտում: Ակտն ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում: Համայնքի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից ակտն ստորագրելու և տարածայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել երեք աշխատանքային օրը, իսկ 10 մլն դրամ և ավելի բյուջե ունեցող համայնքների կողմից՝ 15 աշխատանքային օրը: Ակտի պատճենի մեկ օրինակը հանձնվում

է համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Հսկողության արդյունքներով բացահայտված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՍՏՈՒԳՄԱՆ ԱԿՏ

Վարչական հսկողության և կադրային գործի վարման ուսումնասիրության արդյունքում կազմվում է ակտ (արձանագրություն), որը ստորագրվելուց հետո երբ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

Ակտում նշվում են՝

- 1) ակտի անվանումը, համարը, կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- 2) ստուգում իրականացնող մարզպետարանի անվանումը.
- 3) ստուգում նշանակելու մասին հրամանի կամ հանձնարարագրի ամսաթիվն ու համարը.
- 4) ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը.
- 5) ստուգվող համայնքի անվանումը, ինչպես նաև համայնքի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի անունը, ազգանունը.
- 6) ստուգում անցկացնելու ամսաթիվը, վայրը և ժամանակահատվածը.
- 7) փորձագիտական եզրակացությունը՝ ստուգման ընթացքում փորձաքննություն անցկացնելու դեպքում: Փորձագիտական եզրակացությունը կցվում է ակտին և կազմում է դրա անբաժանելի մասը.
- 8) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել.
- 10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը.
- 11) համայնքի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի ներկայացրած առարկությունների ընդունման վերաբերյալ նշումները:

Ակտում (արձանագրություն) արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է հնարավորինս մանրամասն:

Ակտը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվում տպագիր տեսքով: